ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 110

ք. Երևան 11.03.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 03524692, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Աբովյան, Հատիսի 1/96) միջև 19.05.2022թ. կնքված N ՓՆՄԱՇՁԲ-22-10/6-1 գնման պայմանագրի և Պայմանագրին կից 01.03.2023թ. կնքված N2 համաձայնագրի շրջանակներում «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերությունը N ՓՆՄԱՇՁԲ-22-10/6-1 պայմանագրի 01.03.2023թ. կնքված N2 համաձայնագրով (այսուհետև՝ Պայմանագիր) նախատեսված 500,000,000 ՀՀ դրամի չափով աշխատանքներ /համաձայն փոփոխություն N2 499,273,050 ՀՀ դրամ/ պետք է կատարեր մինչև 2023թ.-ի դեկտեմբերի 15-ը, սակայն «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից կատարվել է ընդամենը 216,445,361 ՀՀ դրամի չափով աշխատանքներ, այսինքն N2 համաձայնագրով նախատեսված աշխատանքներից չեն կատարվել 282,827,689 ՀՀ դրամի չափով աշխատանքներ:

Հաշվի առնելով, որ «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը՝ որոշում եմ՝ «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ